

Երևանն աշխարհի հնագույն քարտեզներում

Երևանը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից: Հայտնաբերված հնագույն բնակավայրը Շենգավիթն է, որը թվագրվում է մ.թ.ա. V-III հազարամյակներով: Դրան հաջորդում են Օիծեռնակաբերդը, կայարանամերձ հրապարակը, Ավան, Զեյթուն թաղամասերը (մ.թ.ա. II հազ. I կես), Կարմիր բերդը (մ.թ.ա. II հազ. վերջ), Էրեբունին (մ.թ.ա. VIII դար), Թեյշեբահին (մ.թ.ա. VII դար), Ավան-Առինջը (մ.թ.ա. II-I դդ.) և այլն: Մ.թ. I-II դարերում Երևանը զարգացել է դեպի Մուխաննաթ թափա և Կոնդ: IV-V դարերում քաղաքի կենտրոնն են դառնում Կոնդը և Հին Երևանը (Շահար): Այդ են վկայում Երևանի տարածքում կատարված հնագիտական պեղումների ժամանակ, ինչպես նաև պատահաբար հայտնաբերված նյութերը:

Էրեբունի-Երևանի մասին առաջին գրավոր հիշատակությունը մ.թ.ա. 782թ. Արգիշտի Ա-ի (մ.թ.ա.786-764) արձանագրությունն է Էրեբունի ամրոցը հիմնադրելու մասին: Արարատ-Ուրարտու պետության անկումից հետո՝ Երվանդունիների ժամանակ, պարսից Դարեհ Ա թագավորը (մ.թ.ա. 522-485) նվաճում է հարևան շատ երկրներ, այդ թվում՝ Հայաստանը: Հեշտ կառավարելու համար իր տերության տարածքը բաժանում է 20 մարզերի՝ սատրապությունների: Հայաստանը մտնում էր 13-րդ և 18-րդ սատրապությունների մեջ: Ըստ Հերոդոտոսի՝ 13-րդ սատրապության կենտրոնը Վանն էր, իսկ 18-րդինը՝ Էրեբունի-Երևանը: Ինչպես տեսնում ենք, Էրեբունին պահպանում է կարևոր դերը Արարատյան դաշտում: Որպես կարևոր բնակավայր՝ Էրեբունի-Երևանը պահպանվում է նաև հետագա դարերում: Այդ են վկայում Ավան-Առինջում և քաղաքի այլ մասերում հնագիտական պեղումները և պատահական հայտնաբերումները, որոնց ժամանակ ի հայտ են գալիս նոր բնակավայրերի հետքեր, մշակութային արժեքներ, դամբարաններ և այլն:

Երևանի մասին հաջորդ գրավոր հիշատակությանը հանդիպում ենք հույն աշխարհագիր Վլավդիոս Պտղոմեոսի (II դար) ութհատորանոց <<Աշխարհագրություն>> աշխատության մեջ (ենթադրվում է, որ հատորներին կից եղել են քարտեզներ, որոնք չեն պահպանվել): Հայաստանին վերաբերող տեքստը 5-րդ բաժնում է և բաժանվում է երկու մասի: Մեծ Հայքի մասին գրված է <<Ասիայի երրորդ քարտեզում>> (85 տեղանուն), իսկ Փոքր Հայքի մասին՝ <<Ասիայի առաջին քարտեզում>> (79 տեղանուն): Մեծ Հայքի հայտնի բնակավայրերից նշվում է նաև Terva կամ Terua բնակավայրը 78.41 կոորդինատներով, որը շատ ուսումնասիրողներ նույնացնում են Երևանին (446. 40 կոորդինատներ):

Պտղոմեոսի աշխատությունում յուրաքանչյուր երկրի նկարագրությունն անունների ցանկ է (մոտ 8000 անուն), որոնց մեծ մասը՝ կոորդինատներով (ավելի ուշ ուսումնասիրողները պարզել են, որ բնակավայրերի կոորդինատները մոտավոր են): Անունների ցանկի ու թվարկումների հիման վրա մասնագետները կազմել են առանձին երկրների կամ աշխարհի քարտեզներ, որոնց պարագայում ավելի է արժևորվում Պտղոմեոսի աշխատանքը, քանի որ անուններն սկսում են

գործել իրենց միջավայրում: Պտղոմեոսի աշխատանքը, չնայած թերություններին (սխալ են կոորդինատները, որոշ բնակավայրերի, լճերի, ծովերի, գետերի անունները. օրինակ՝ Գողթնը գրված է Կոլտենե, Բաղաբերդը՝ Բալխաբիգա, Թավրիզը՝ Գաբրես...), շատ կարևոր աշխատանք է: Այդ է պատճառը, որ դեռևս միջնադարում ցանկի անունները տեղադրել ու գծագրել են մագաղաթի, այնուհետև՝ թղթի վրա՝ կազմելով քարտեզներ: Վերջիններս բազմիցս հրատարակվել ու վերահրատարակվել են: Բոլոր քարտեզներում Մեծ Հայքի շատ բնակավայրերի թվում միշտ նշվում է Terva կամ Terua բնակավայրը:

Անդրադառնանք մի շարք քարտեզների: Իտալացի Բոնոնին մագաղաթի վրա պատկերել է Պտղոմեոսի «Աշխարհագրության» ատլասը, որը տպագրվել է 1482թ., Հռոմում: Ատլասի պայմանական անուն կրող «Քարտեզ 17-ում» ներկայացված են Մեծ Հայքի և Փոքր Հայքի՝ Պտղոմեոսի նշած բնակավայրերը, ընդ որում՝ Մեծ և Փոքր Հայքերը նշված են միասին, մեկ էջի վրա (քարտեզ 1, քարտեզներն ըստ Ռ. Գալչեանի, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ աշխատության, Երևան, 2005),



ինչը չենք տեսնում այլ քարտեզներում: Քարտեզում նշված են հայոց Տուշպա (Վան), Տիգրանակերտ, Արտաշատ, Արմավիր, Արտամետ, Նաքուանա (Նախիջևան), Մելիտենա (Մալաթիա) և այլ բնակավայրեր, որոնց թվում նաև Terva բնակավայրը:

1578թ. տպագրվել է Ջ. Մերկատորի պատրաստած «Մեծ Հայքի, Իբերիայի, Կողքիսի և Ալբանիայի քարտեզը»: Ինչպես նախորդ դեպքում, այստեղ էլ Հայաստանի շատ բնակավայրերի շարքում նշված է Terua բնակավայրը (քարտեզ 2):



Հաջորդ քարտեզը 1597-98թթ. Վենետիկում Ջ. Մաջչինիի հրատարակած «Ասիայի III Ադիսակ» քարտեզն է: Կարևորագույն քաղաքների թվում, դարձյալ նշված է Terua բնակավայրը:

1605թ. հրատարակված ու 1698թ. վերահրատարակված Յ. Հոնդրիուսի կազմած «Մեծ Հայքի, Իբերիայի, Կողքիսի և Ալբանիայի քարտեզում», որն իրականում Ջ. Մերկատորի քարտեզի վերահրատարակությունն էր փոքր փոփոխություններով, Մեծ Հայքի բնակավայրերի շարքում նշված է Terua-ն (քարտեզ 3):



1653թ. Ֆիլիպ Դը Լա Ռուի պատրաստած «Հայաստանի քարտեզում» ներկայացված են Հայաստանի չորս նահանգները՝ Մեծ Հայքը, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերը:

Մեծ Հայքի կազմում նշված է Terua բնակավայրը (քարտեզ 4):



1658թ. դարձյալ Պտղոմեոսի <<Աշխարհագրության>> հիման վրա ֆրանսիացի քարտեզագիր Ն. Սանսոնը պատրաստել ու տպագրել է Ատլաս, որի մեջ ներկայացրել է նաև <<Հայաստանի, Իբերիայի, Կողքիսի ու Ալբանիայի քարտեզը>>: Հայաստանի բնակավայրերի շարքում նշված է Terua-ն (քարտեզ 5) :



Այս քարտեզում ևս շատ սխալներ կան, հատկապես անունների մեջ: Ինչպես տեսնում ենք, Պտղոմեոսի <<Աշխարհագրության>> հիման վրա պատրաստված բոլոր քարտեզներում, նաև մեկ այլ՝ ոչ պտղոմեոսյան ցանկի հիման վրա պատրաստված Ֆիլիպ Դը Լա Ռուի քարտեզում, Արարատյան դաշտում միշտ նշվում է Terva կամ Terua բնակավայրը, իսկ դրա հարևանությամբ նշվում են Արտաշատը, Արմավիրը, Նաքսուանան (Նախիջևանը) և այլն: Ուսումնասիրողները Պտղոմեոսի հիշատակած Terva-ն կամ Terua-ն նույնացնում են Երևանին: Հետագա ուսումնասիրությունների ժամանակ ենթադրվում է, որ Պտղոմեոսի հունարեն ձեռագիր օրինակներում շփոթմունք է

եղել (անփույթ գրվելու կամ չիմացության պատճառով) և հունարեն I տառը արտագրելիս դրա հորիզոնական վերին գիծը երկարացվել է ու արդյունքում ստացվել է T տառը: Այդ առիթով անգլիացի ՈԻ. Աուզլեյը գրում է. <<Այս դեպքում զորավոր նմանություն է ստացվում Iրva-ի և Terva-ի միջև, ինչպես մի շարք հին ու նոր անունների միջև, որոնց քննությունը երբեք վեճի առարկա չէ եղած>> (Հ. Հակոբյան, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1934, էջ 454): Այն բանում, որ Irvan-ը դարձել է Tervan, համոզված են շատ մասնագետներ: Հետագա հեղինակները և քարտեզագիրները, հետևելով մեկը մյուսին, Մեծ Հայքի կենտրոնում՝ Արարատյան դաշտում, նշում էին Terva կամ Terua բնակավայրը: Աուզլեյը նշում է նաև, որ աշխարհագրական դիրքով զուգահիշությունը գրեթե կատարյալ է. Պտղոմեոսը Terva-ն նկարագրում է 78 - 0 երկարության, 41-50 լայնության վրա: Ժան Շարդենը Երևանի համար նշում է 78-20 երկարություն, 41-50 լայնություն: Անդրադառնանք նաև հայ մատենագրությունում Երևան անվան հնագույն հիշատակումներին և տեսնենք, թե Պտղոմեոսին համեմատաբար մոտ ժամանակներով թվագրվող հայ մատենագիրների աշխատություններում ինչ տեղեկություններ կան Երևանի մասին:

Երևան անունը հայ մատենագրությունում առաջին անգամ նշվում է V դարի հնագույն մի հիշատակարանում՝ <<Հնոց ու նորոց պատմութիւն Դավթի և Մովսէսի Խորենացոյ>>: Հիշատակարանում գրված է, որ Մովսէս Խորենացին և Դավիթ Անհաղթը, տեսնելով իրենց երկրի ավերումը Հազկերտի կողմից, մեծ վիշտ են ապրում և փորձում մեկուսանալ տարբեր տեղերում. Խորենացին Էջմիածնին մոտ մի գյուղում, Դ. Անհաղթը՝ Հայոց աշխարհից դուրս, <<...իսկ Դավիթը, Մամբրեն, Պողոսը և Աբրահամը՝ Մովսէսի ընկերները, մնացին Երևանում: Եվ այդ ժամանակ հայոց կաթողիկոսը Մովսէսի աշակերտ տեր Գյուտն էր>> (<<Հնոց և նորոց պատմութիւն վասն Դավթի և Մովսէսի Խորենացոյ, թուղթ Դիոնէսիոսի>>, Կ. Պոլիս, 1874):

Երևանի մասին հաջորդ հիշատակությունը <<Գիրք թղթոց, մատենագիտութիւն նախնեաց>> ձեռագիր մատյանում է: Դրանում գրված է, որ Դվինում Աբրահամ կաթողիկոսի՝ 607թ. հրավիրած հակաքաղկեդոնական եկեղեցական ժողովին մասնակցել են նշանավոր կրոնապետներ, որոնց թվում՝ Դավիթ Երեցը և Ջոջիկ անունով վանականը Երևանից (<<Գիրք Թղթոց>> մատենագրութիւն նախնեաց, 1901): Այս կարևոր եկեղեցական ժողովին երևանցի եկեղեցականների մասնակցությունը վկայում է, որ V-VII դարերում Երևանը ճանաչված ու կարևոր բնակավայր էր: Նշենք, որ այդ ժամանակաշրջանի Երևանի մասին յուրատեսակ վկայություններ ու <<հիշատակություններ>> են նաև քաղաքի հնագույն եկեղեցիները՝ Պողոս Պետրոսը (V- VI դդ.) և Ավանի սբ. Հովհաննես եկեղեցին (VI-VIIդդ.): Արաբական արշավանքների նախօրեին Երևանը, հավանաբար, եղել է բավական ստվար բնակչությամբ և ամուր բերդով բնակավայր: Դա են վկայում VII դարի պատմիչ Սեբեոսի տեղեկությունները (Ղ. Ալիշանի վկայությամբ)՝ կապված արաբական արշավանքների հետ: Ըստ պատմիչի՝ 642-643թթ. արաբները արյունահեղ մարտեր են մղել Երևանի մոտ, բերդում ապաստանած քաղաքի պաշտպաններն ուժեղ դիմադրություն են ցույց տվել թշնամուն, և արաբները չեն կարողացել գրավել ամրոցը. <<...մարտեան ընդ բերդին և ոչ կարացին առնուլ>>

(Մեբեոս, Պատմութիւնք, 1672թ., Ձեռագիր մատյան, 2639): 660-663թթ. արաբները երկրորդ անգամ են պաշարել Երևանը (բերդը) ու այս անգամ հավանաբար գրավել են քաղաքը՝ Երևանի բերդը դարձնելով արաբական նստավայրերից:

Հովհ. Դրասխանակերտցին (IX-Xդդ., Պատմութիւն Հայոց), Ս. Անեցին (XII դար, <<Հաւաքմունք ի գրոց պատմագրաց>>), Ստ. Օրբելյանը (XIII դար) և այլ մատենագիրներ ևս իրենց աշխատություններում խոսում են Երևանի մասին: Ինչպես նկատում ենք, Երևանի կրոնապետները մասնակցում են Դվինում կաթողիկոսի գումարած կրոնական ժողովին, ուժեղ դիմադրություն են ցույց տալիս արաբներին և այլն: Իսկ սա նշանակում է, որ Երևանը վաղ միջնադարում էլ պահպանում էր նախկին՝ դեռևս արարատյան կամ ուրարտական շրջանից հայտնի կարևոր բնակավայր լինելու դերը: Դա երևում է նաև հետագայում՝ 17-րդ դարի կեսերին պատրաստված քարտեզներից, որոնցում միշտ նշված է Երևանը: Այդ քարտեզների հիմք են եղել եվրոպացի ու այլ ճանապարհորդների, դեսպանների, առևտրականների տեղեկություններն ու տվյալները:

Անդրադառնանք մի քանի այդպիսի քարտեզների: Այսպես, աշխարհագրագետ Ֆիլիպ Դիվ Վալի՝ 1676թ. պատրաստած քարտեզում, որի հիմքն են արաբ պատմաբան և աշխարհագրագետ Իսմայիլ Աբուլֆեդայի (1273-1332թթ.) տեղեկությունները, Հայաստանի մեծ մասը Թուրքիայի տիրապետության տակ է: Իսկ Հայաստանի քաղաքների շարքում նշված է Erivan-ը (քարտեզ 6):



Erivan ձևով Երևանը նշված է Ալեն Մալլետի <<Տիեզերքի բացատրությունը>> հինգհատորանոց գրքի 2-րդ հատորում՝ Ասիային նվիրված գրքի քարտեզում, որի ֆրանսերեն օրինակը տպագրվել է 1683թ., իսկ գերմաներեն թարգմանությունը՝ 1719թ.: Երևանը Հայաստանի կարևոր քաղաքներից է և նշված է Կարսի ու Էրզրումի հետ (քարտեզ 7):



Հետաքրքիր է, որ պատկերված է նաև տեսարան Երևանից, Արարատ սարով ու Նոյյան տապանով, իսկ սարից վեր՝ ամպերի վրա, գրված է Erivan (քարտեզ 8):



Անգլիացի Ռ. Մորդենի պատրաստած «Սրբագրված աշխարհագրություն»-ը առկա էր տպագրվել է 1680թ., 1686թ., 1688թ. և 1770թ.: 1688թ. տպագրված քարտեզում պատկերված են Հայաստանը, Վրաստանը և հարևան երկրները: Նշված բնակավայրերի շարքում հիշատակվում է Ervan-ը:

Երևան անունը Irvan (իրանական տարբերակ) ձևով է գործածում ֆրանսիացի Ժ. Շարդենը, ով 1664-1667թթ. ճանապարհորդել է Արևելքում, եղել նաև Հայաստանում, Իրանում, Թուրքիայում և այլ երկրներում: 1686թ. Լոնդոնում հրատարակվել է նրա «Ճանապարհորդություն դեպի Պարսկաստան և Արևելյան Հնդկաստան, Սև ծովի և Կողքիսի միջով» գիրքը, որտեղ Հայաստանին նվիրված մասում ներկայացված է նաև Երևանի հատակագիծը: Քարտեզի վերևում, ինչպես

Մալլեոի քարտեզի պարագայում է, գրված է Irivan (գրված է նաև պարսկերեն, քարտեզ 9):



Մոտ 1710թ. Հոլանդիայի Լեյդեն քաղաքում տպագրված «Նոր և հետաքրքիր ատլասում» Հայաստանի այլ քաղաքների շարքում նշված է Erivan-ը (քարտեզ 10):



Քարտեզը պատրաստել է Վան դեր Սան: Հոլանդացի Հ Մոլլը Լոնդոնում 1729թ. հրատարակած քարտեզում ևս նշել է Երևանը՝ Irivan ձևով (քարտեզ 11):



Օսմանցի առաջին աշխարհագրագետ Ք. Չելեբիի (1609-1657) «Աշխարհացույց» աշխատության հիման վրա 1732-35թթ. հրատարակված քարտեզում (օսմաներեն) Երևանը հիշատակվում է Revan անունով (Ռ. Գալչեան, 2005, էջ 201): Հետաքրքիր է ֆրանսիացի քարտեզագիր Ռ. Վուգոնդիի՝ 1762թ.

հրատարակած «Միջնադարյան աշխարհի քարտեզը»։ Հիշատակված քիչ բնակավայրերից նշվում է Erivan-ը (քարտեզ 12):



Հայ միջնադարյան աշխարհագրագիտական պատմությունում կարևոր տեղ ունի VII դարի գիտնական՝ տիեզերագետ ու մաթեմատիկոս Ա. Շիրակացու «Աշխարհացույցը» (այն նախկինում վերագրել են Մ. Խորենացուն): Հայ գիտնականների մանրամասն ուսումնասիրությունները և փաստերը վկայում են, որ «Աշխարհացույցը» գրվել է ամենաուշը մինչև 608-610թթ.: «Աշխարհացույցում» Մեծ Հայքը ցույց է տրված 37-387թթ. սահմաններում (Մ. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 66): Հայտնի է, որ մ.թ.ա. 37թ. Հռոմեական կայսրության ու Պարթևական թագավորության միջև կնքված դաշնագրով Մեծ Հայքից անջատվում ու Պարթևական թագավորությանն են կցվում Հայոց Միջագետքը՝ Ծավդեքը (Տուր Աբդին) և Արվաստանը՝ Մծբին քաղաքով (27600 քկմ տարածություն): Զգացվում է, որ «Աշխարհացույցի» հեղինակը ծանոթ է եղել Պտղոմեոսի «Աշխարհագրությանը»։ Ի տարբերություն Պտղոմեոսի՝ նա, բնականաբար, շատ ավելի մանրամասն ու ճշգրիտ է նկարագրել հատկապես Մեծ Հայքը, Վիրքը, Կողքիսը, Աղվանքը և հարևան այլ երկրներ։ Ավելի ճիշտ են դասավորվել Կասպից ծովի արևմտյան մասի երկրները։ «Աշխարհացույցի» հիման վրա Մ. Երեմյանը կազմել է Հայաստանի և հարևան երկրների քարտեզը՝ օգտվելով նաև 387թ. Հայաստանի առաջին բաժանումից մինչև 591թ. Հայաստանի երկրորդ բաժանումը գրավոր աղբյուրներում (պայմանագրեր, հիշատակումներ) վկայված բնակավայրերի, գետերի, լճերի անվանումներից, ինչպես նաև «Աշխարհացույցից» առաջ ու նրան ժամանակակից պատմիչների, այդ թվում՝ Եղիշեի, Խորենացու, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Սեբեոսի և այլ հեղինակների աշխատություններից։ «Աշխարհացույցում» Արարատյան դաշտավայրի այլ բնակավայրերի շարքում հիշատակվում է Երևանը (Երևանի բերդը)։ Իսկ Terva կամ Terua անունով բնակավայր այլևս չկա։ Ինչպես նախորդ համարյա բոլոր դեպքերում, «Աշխարհացույցի» տեղեկությունների հիման վրա Երեմյանի կազմած քարտեզում ևս նշված է Երևանը։ Սակայն ավելի վաղ Երեմյանի վերականգնած

<<Ասիայի երրորդ քարտեզում>> (ըստ Պտղոմեոսի տեղեկությունների) Terua-ն նշված է Մեծ Հայքում՝ Արմավիրից, Արտաշատից և Արաքս գետից հարավ: Այդ բնակավայրը Ս. Երեմյանը համադրում է Դարոյնքի հետ և տեղադրում Արաքսից հարավ-արևմուտք (ՀՄՀ, հ. IX, էջ 418-419):

Ինչպես նկատում ենք, <<Աշխարհագրոյցի>> տեղեկությունների հիման վրա կազմված քարտեզում Terva կամ Terua անունով բնակավայր չկա, բայց կա Երևան անունով բնակավայր: Terva կամ Terua անունով բնակավայր չկա, որովհետև Հայաստանում այդ անունով բնակավայր չի եղել և <<Աշխարհագրոյցի>> հեղինակը՝ Շիրակացին, հավանաբար առաջիններից մեկն է եղել, որ հասկացել է հույն արտագրող <<գրիչների>> սխալը, այն է՝ Terva կամ Terua անունով բնակավայրը Երևանն է, ինչն ընդունում և հավանական են համարում ավելի ուշ ժամանակաշրջանի շատ ուսումնասիրողներ:

Այսպիսով, հայոց Արարատ-Ուրարտու պետության թագավոր Արգիշտի Ա-ի արձանագրությունում Erebuni անունով հիշատակվելուց հետո Երևանն աշխարհի հնագույն քարտեզներում հանդես է գալիս Terva, Terua, Erivan, Eiruan, Erivan, Ervan, Irivan, Revan, Էրիւանում (Էրիվան) և այլ անուններով, իսկ հայ միջնադարյան մատենագրությունում հիշատակվում է Արիւան, Էրիւան, Էրւան, Էրվան և այլ ձևերով:

Երևանի պատմությունը, դրա հնագույն բնակավայր լինելը, մշտապես բնակեցված լինելը, Արարատյան դաշտում կարևոր տեղ ու դեր ունենալը, ինչն ապացուցվում է հնագիտական պեղումներով հայտնաբերված մարդկային պատմության զարգացման բոլոր ժամանակաշրջաններն ընդգրկող մշակութային արժեքներով ու գրավոր աղբյուրներով, հնարավորություն է տալիս ասելու, որ Պտղոմեոսի <<Աշխարհագրություն>> աշխատության մեջ Terva անունով հիշատակված տեղանունը, ամենայն հավանականությամբ, հայոց հնագույն բնակավայրերից է՝ այսօրվա Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը:

Անժելա Տերյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագույն և միջնադարյան պատմության բաժնի վարիչ